ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

,, 16 ,, մարտի 2015թ. N 48-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1, ,,ՀՀ Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն,, պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով թատրոնի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով, հետևյալ կազմով.

Մուշեղյան Յու . – ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ, հանձնաժողովի նախագահ

Սաֆարյան Հ. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ

Ղազարյան Ն. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ

Նյութական պատասխանատու անձինք

Բիձյան Հ. - հանձնող

Ղափանցյան Հ. - ընդունող

Բոշյան Ա. - թատրոնի հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Յու.Մուշեղյան/ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև թատրոնի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:

ՄԱՐԶՊԵՏ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ